

ՆՈՐԱԳՅՈՒՏ ՎՐԱՅԱՏԱՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ
XVII—XIX Դ. Դ. ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՆԾԱՆՈԹ ԽԱՂԵՐԸ

Առաճին օտարիկ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
1944 թ. № 5 «Տեղեկագրից»

891.99-13

~~VP-52~~

ԼՔիյիտեր-բեկ.

Երկրագլուխ. Բրազիլիա.
 Խառնիկի ճեղքողը ճորճ.
 և ի՞նչ - ի՞նչ որ- աշխարհագր.
 և ի՞նչ որ- Բաղնիկ: 10.

[illegible]

with 5 inch paper sample 1 n.

091 (= 91.09) (048)

U-52

ԱՍՏԻՊՈՎ Ե 1951 թ.

Գրուծ. 1. Մեկիսեթ-Բեկ

Ա 303.59
ԽՈՐԱԳՅՈՒՏ ՎՐԱՑԱՍԱՌ-ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ
XVII—XIX Դ.Դ. ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՆԾԱՆՈԹ ԽԱՂԵՐԸ

Հայերեն ձեռագրերը վրացատառ գրությամբ, ինչպես և ազրբեջանա-կան ու թուրքական ձեռագրերն ու հին սպագիր զրբերը հայատառ գրու-թյամբ, բովականաչափ տարածված էին XVII—XIX դ.դ.: Նրանք ոչ միայն երկու հարևան ժողովուրդների, մի դեպքում՝ հայերի ու վրացիների, և մյուս գեղջում՝ հայերի ու ազրբեջանցիների կամ թուրքերի բարեկամական փոխ-հարաբերությունների ու համերաշխության մասին են վկայում, այլև այն կուլտուրական սրտուցիայի արտահայտություններն են, որին հետևում էր որոշ քաղաքական-հասարակական շրջապատի մեջ ընկած այս կամ այն էթնիկական կոլեկտիվը կամ նրա որևէ հատվածը, օրինակ՝ հայերը Վրաս-տանում, սկսած հայ թագավորության—իշխանությունների անկումից հետո՝ XI կամ XIV դ.դ.: Մասնավորապես հայերեն ձեռագրերը վրա-ցատառ գրությամբ տարածված էին Վրաստանում աստվածապաշտության պահանջներից զրդված, քանի որ Վրաստանում գործող հայ հոգևորականու-թյան մեծագույն մասը հայերեն գրել-կարդալ չգիտեր:

Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Կալիստորատը սիրալիբ կերպով մեր արամազրության առկա զրեց, դիտական կոնսուլտացիայի նպա-տակով, թրխիսաբնակ դորեցի Հակոբ Կոնստանդնի Խիզանովին պատկանող մե-երկու հայերեն ձեռագիր, որոնցից մեկը վրացատառ հայերեն հազ-վագյուտ զրչագիր հանդիսացավ:

Դրչագիրը, որ, անկասկած, unicum-ների շարքը պիտի դասվի, զրբ-ված է կապույտ թղթի վրա in folio, 332 էջ և ամփոփված է կա-տոնի կազմի մեջ: Պագինացիան նշված է վրացական տառերով: Ըստ էության այն բազմաբովանդակ և հարուստ մի ժողովածու է, որ սկզբից մինչև վերջը, չնչին բացառությամբ, թրխիսի հայկական բարբառի վերա-ծած գրաբարով գրված նյութեր է ընդգրկում, միայն վրացատառ գրու-թյամբ:

Ժողովածուն հիմնականում բաղկացած է 6 գրվագից՝ հետևյալ հաջոր-դականությամբ. 1. Հին և Նոր Ուխտ, էջ 1 ա—86 բ. 2. Հայսմավուրք և ներբող-ներ, էջ 87 ա—215 բ. 3. Աղոթագիրք, էջ 217 ա—258 ա. 4. Շարական, էջ 269 բ—284. 5. Տաղարան-գանձարան, էջ 286 ա—305 ա. 6. Նրգարան-խազարան, էջ 322 ա—332 բ:

Զեռագրերը գրված է XIX դ. առաջին կեսին Ստեփան Դավթի (Դավի-թի) Ալամզարովի ձեռագրի որ քննիչը և զրբիչը Կոնստանդնի անդամների ու ազ-

գականների անունները հավերժացրել է երկրորդ դրվագում՝ վարքագրական-վկայաբանական տեքստերի ու ներբողյանների վերջում մեծած հիշատակարաններում, հիմնական տեքստի լիզվով, այսինքն թրիլիսիի հայկական բարձրագույն վերածված գրարարով, միայն վրացատառ գրությամբ։ Նույն Ստեփան Ալամդարովը հիշատակված է նաև վերջին՝ վեցերորդ դրվագում գետեղած մի քանի խաղում, օրինակ՝ Ջահել-Օղլանի III երգում, ուր երկու անգամ հիշված է «պարոն Ստեփանը», նաև անանուն երգչի I խաղում, ուր հիշված է «Ստեփանը», և II-ում, ուր հիշված է «Ալամդարովը», նույնպես և մի վրացերեն երգում, որ «Մուխամբազի քարթուլի» (այսինքն՝ վրացերեն մուխամբազ) վերնադիրն է կրում, ուր երկրորդ տողում կարդացվում է՝ «Ալամդարովիս թվալթա նաթելի» (այսինքն՝ Ալամդարովի աչքի լույս)։

Ձեռագրի երկրորդ դրվագում մտցրած հիշատակարանները կազմված են միեւնույն տրաֆարետով ու իրար շատ նման են։ Ահա և մի նմուշ այդ հիշատակարաններից հայերեն տառադարձությամբ. «Ծնորհիվ և բարեխոսությամբ սրբուհու կուսին Մարիամու, վաղարմյա, Քրիստոս Աստված, աշխատող սուրբ գրույս Ստեփան Դավիթիչ Ալամդարովին և յուր ծնողացն Դավիթին և Սառին, և յուր կողակցունցն Մայրինն* և Մարթամին**, և յուր եղբորանցն և քվիրանցն և յուր միամոր վարդույն Դավիթին, և յուր հին և նաւը ննջիցիլույն։ Եվ վաղարմյա [ք] վաղարմի ասեք. Աստված և ձիգ վաղարմեացի ի փառս Քրիստոսի Աստուծո մերո. ամեն»։

Ինչ վերաբերում է ժողովածուի բովանդակությանը, սրա մասին պետք է ասել հետևյալը.

Առաջին դրվագում մտցրած նյութը ներկայացնում է, առանց բացառության, պատմվածքներ 31-ի չափ, որ կազմված է Աստվածաշնչի Հին և Նոր Ուխտի հատվածների հիման վրա և, այսպիսով, ոչ մի նորություն չի ներկայացնում։

Համեմատաբար ավելի հետաքրքիր է երկրորդ դրվագը, ուր ամփոփված են վարքաբանական-վկայաբանական տեքստեր ու ներբողներ ընդհանուր և հայոց եկեղեցու սրբերի վերաբերյալ, ընդամենը 33 հատ։ Այս սրբերն են՝ Գրիգոր Ակրակառնաացի, Մրապիոն և արքա Մարկոս, Մարկոս Հոռմայեցի, Ղուկիոս (Լուվկիոս), Հովհաննես (Օհանես) Դաւնեցի, Սեդեքատրոս և Կոնստանդին թագավոր, Գրիգոր Լուսավորիչ, Գուրիաս, Մամոնաս և Աբելաս սարկավազ, Կողմուս և Դամիանոս, Հակովիկ պարսիկ, Գողա և յուր կինը, Ստեփանոս «ամենամաքուր վարդապետ», Օսկանա որդին, Հովհան Ոսկեբերան, Եփրեմ Խորին, Քաբլտոնե կինը և ներքինին, Եվդոկի կույր, Եփրոսինե կույր, Կատարինե հանճարեղ կույր, Մարիամ եգիպտացի, Գեորգ զորավար, Երինե կույր, Կյուրեղ եպիսկոպոսն ու նրա մայր Աննան, Կիրակոսն ու նրա քույր Ուրբաթը, Տայասա, Յուլիտա ու նրա որդի Կիրակոսը, Մարիանե կույր, Մամիկ, Մանվել ու Իսմայել եղբայրները, Հոր արդարը, Մարիամ աստվածածինը, Մարա ստրատելաոն և Ռուսինոսը, Մարտիրոսոս, Մարկոս և Մակար չգնավորը Կոնստոս։

* Առաջին կինն է։ Լ. Մ.-Բ.։

** Անկասկած, երկրորդ կինն է։ Լ. Մ.-Բ.։

Այս՝ երկրորդ դրվագում ամփոփված վարք և վկայարանությունները հիմնականում շփվում են հայոց «Յայսմառութի» տեր-Խարայի խմբագրությանը, որ կազմված է Կիլիկիայում XIII դարի առաջին կեսում:

Երրորդ դրվագում մուծած է 10-ի չափ աղոթք՝ 4—Եփրեմի, 1—Աթանասի և Եփրեմի, 2—Գրիգոր Լուսավորչի, 2—Գրիգոր Նարեկացու և 1—անձանոթ հեղինակի:

Չորրորդ դրվագում մտցրած են զլխավորապես ննջեցյալներին նվիրված շարականներ, մասամբ նաև մանկանց նվիրվածները, ընդամենը 58 հատ: Հիմնգրքի դրվագում ամփոփված են տաղեր, նվիրված սուրբ հոգուն, Փրկչին, Մարիամ աստվածածնուն, Երուսաղեմին, նաև դարնան, սիրո, ուրախության ու բարեկամության մասին և այլն:

Վերջապես, վեցերորդ դրվագում, որ ինքնուրույն է և ամենահետաքրքիրը, դետեղված են 18-ի չափ աշուղական խաղեր այլ և այլ լեզուներով՝ 4 վրացերեն, 4 ադրբեջաներեն և թուրքերեն, մնացած 10-ը՝ հայերեն: Վերջին շարքում 3-ը Ձահեղ-Օղանին է, 3-ը՝ Ստեփանոսի, 2-ը՝ Շամշի-Միլեդյի և 2-ը անձանոթ հեղինակի:

Բանի որ ցուցակագրած ձեռագրում ամենահետաքրքիրը վեցերորդ դրվագն է, որ առանձնապես աչքի են ընկնում հայերեն աշուղական խաղերը, մենք կաշխատենք ստորև տալ այդ դրվագի մեջ մտած բանաստեղծությունների համառոտ ընտրվածքը:

Վրացերեն երգերից առաջինը (էջ 323 ա) բաղկացած է տարբեր մեծություն ունեցող (5-ից մինչև 7 տող) տներից, ընդամենը պարունակելով 25 տող, և սկսվում է հետևյալ բառերով. «մզեո, սխվապան ումետես շե շվիձլեի քթամաս» և այլն:

Ներքորդ (էջ 323 բ), որ պարունակում է 6 տուն կամ 23 տող, Ալ. Ճավխավաձեի համապատասխան ոտանավորի* վարիանտն է և սկսվում է այսպես.

«Հոր, գրոնի, գրոնի նագերնի մտկարարաթ»:

Երրորդ երգը, որ «Մուխամբազի քաթուլի» վերնագիրն է կրում (էջ 327 բ—328 ա), բաղկացած է 5 տնից կամ 30 տողից, և սկսվում է այսպես՝

«Հաի, հաի, միդեդո, խար սաղ՝ վարելի

Ալամդարովիս թվալթա նաթելի»:

Չորրորդ երգը (էջ 331 բ) բաղկացած է 4 տնից կամ 25 տողից, սկսվում է այսպես.

«Խեմծիփե ծիգնս իծեդերա, միսգան վարդի իփարեբա»:

Վերջապես, հիմնգրքի երգը (էջ 332 ա), որ բաղկացած է 4 տնից կամ 16 տողից, երկրորդի պես Ալ. Ճավխավաձեի ոտանավորի վարիանտն է,** սկսվում է այսպես.

«Ճմուռնվիս մախվիլի գուլսա մսոմիա»:

Վրացերեն բոլոր երգերը սիրային են և այս հոգվածի հետ զուգընթացաբար ամբողջապես հրատարակվում են մեր հատուկ հոգվածին կից,

* Ալ. Ճավխավաձեի երկերը, Ի. Գրիշաշվիլու խմբագրությամբ, Թբ., 1940, էջ 41:

** Նույն տեղը, էջ 63:

որ տպագրվում է Թբիլիսիի Ստալինի անվան Պետական Համալսարանի Աշխատությունների XXVI հատորում (1944), էջ 193—196:

Ազգրեջանական և թուրքական երգերն ևս 4 հատ են, որոնցից 3-ը անձանոթ հեղինակի և մեկը՝ «Քյորոզլու»։ Այս երգերի սկզբնական տողերն են. առաջինը (էջ 325 ա) «Թավրիզ ուշալամ իրում սոշուրը», երկրորդը (էջ 327 բ) «Ղադր մեվլամ բղա բար դովլաթ», երրորդը (էջ 328 բ) «Էս Բորոզլի արիս, Սոջա ուզուր օրսուն գեղան», և չորրորդը (էջ 332 ա)՝ «Չավուր բաս տուն իուլաշումն դի բալամադմին»:

Հայերեն խաղերը վրացերենից և ազգրեջանական-թուրքականից տարբերվում են նրանով, որ մի-երկու բացառությամբ պարունակում են իրենց հեղինակների անունները, որոնք են Ջահել-Օղլան, Ստեփանոս և Շամչի Մելքո:

Ջահել-Օղլան՝ կեղծանուն է, որ նշանակում է «երիտասարդ որդի» և որով հայտնի էր թբիլիսեցի աշուղ-երգիչը։ Ըստ Գ. Ախվերդյանի վկայությամբ, «Ջահել Օղլանը Մոզգոքում բազալ էր, ինքը Թիֆլիսի ծնունդ էր. խաբազ (կոշկակար) էստատե Դեկիրլոյի տղան էր»^{*}։ Սրա ստեղծագործությունից ցարդ հայտնի էր 4 խաղ, որոնց վրա այժմ, ըստ նորագույն աճող գիր ժողովածուի, ավելանում է 3-ը. 1. «Մուխամբազ. Թե սուչ ունիմ, իմ գիվանս անիս դու» (էջ 324 ա), 3. տուն—48 տողից բաղկացած. 2. «Մե թնգություն ունիս բարութ թվանդի» (էջ 325 բ), 1 տուն—19 տող. 3. «Պարուն Ստեփան, յաղուզ բեղամաղ իս դու» (էջ 332 բ), 2 տուն—23 տող։ Բոլոր խաղերը 11 (7)-վանկանի են:

Ջահել-Օղլանի խաղերից հետո գալիս են Ստեփանոսի (XVII դ.)^{**} 3 խաղերը, որ կատարյալ նորություն է. 1. «Իմ աղնվույդ լույս պատկերիդ» (էջ 326 բ), 5 տուն—25 տող. 2. «Իմ սիրելու լույս պատկերին տխուրության» (էջ 326 բ), 5 տուն—20 տող և 3. «Մաքուր և սուրբ ըստյանց բուշին փափագիմ» (էջ 327 ա), 5 տուն—20 տող։ Բոլոր խաղերը 11-վանկանի են:

Ստեփանոսի խաղերին անմիջապես հետևում են անձանոթ երգչի 2 խաղերը՝ 1. «Իմ սիրելի, մոզս արի, հալդ իմանում» (էջ 330 ա), 5 տուն—20 տող, 13-վանկանի և 2. «Ով, սիրելի, միթե յիս ձիւր միկին իսկի չիմ գալի» (էջ 329 ա—բ), 5 տուն—35 տող, 15-վանկանի:

Ջեռագիր ժողովածուի վերջում դետեղված են Շամչի-Մելքոյի 2 խաղերը՝ 1. «Մե տարի գնացի Պենտիկինց բաղն» (էջ 330 բ), 5 տուն—20 տող, 11-վանկանի և 2. «Գեղում իմ թարիփդ անիմ, Տալավրեցի շուն Առաքիլ» (էջ 331 ա), 7 տուն—35 տող, 15-վանկանի։ Սրանցից առաջինը «Թեջլիս» է, ի նկատի ունի Պենտիկինց բաղն և հիշեցնում է Դաբբեդիարի նմանօրինակ խաղը Չիթախենց բաղի մասին^{***}։ Իսկ մյուսը մի նոր վարիանտ է Տալավրեցի Առաքիլին նվերված խաղի^{****}:

Երկուսն էլ դավելադական-ծաղրական բնույթ են կրում և Թբիլիսիի ու նրա շրջակայքի կենցաղին վերաբերում (սրանց վրացերեն չափածո մեր թարգմանությունը տպագրվում է վերոնշյալ հոգվածում՝ «Թբ. Պետ. Համ. Աշխատ.» XXVI), էջ 198—199:

* Հայ աշուղներ՝ II. Թ. 1903, էջ 494, ծան. 1:

** Հմմտ. В. Брюсов, Поэзия Армении, М. 1915, стр. 59.

*** Հայ աշուղներ, II, էջ 251—252:

**** Նույն տեղը, էջ 265—266:

Շամչի-Մեղքո—թբիլիսեցի Մեղքոն Գուլքանովի կեղծանունն է։ Նա ապրել է XVIII դարի հրկրորդ կիսում և XIX-ի սկզբում։ ծնված պիտի լինի 1740—50-ական թվականներին, վախճանվել է 1820—30-ական թվականներին։ Արհեստով կղել է մոմագործ, ուստի և կոչվել է «Շամչի-Մեղքո», որ մոմագործ Մեղքո է նշանակում։ Նրա ստեղծագործությունից մեկ հասել են մոտ 14 հայերեն և 7 վրացերեն խաղեր*։

Առհասարակ պետք է ասել, որ մեր ցուցակագրած ձեռագիր ժողովածուն ձեռն արժեք ունեցող մատյան է թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվի տեսակետից, քանի որ հարուստ նյութ է պարունակում թբիլիսիի հայ բարբառի ուսումնասիրության համար, իհարկե, Սայաթ-Նովայից հետո։

Ահա և նորագյուտ ձեռագիր-ժողովածուի մեջ մտցրած հայ աշուղական պոեզիայի անտիպ նմուշները։

Ա. ՍՏԵՓԱՆՈՍ

I

1. Իմ աղնվույզ լույս պատկերիդ տիսության
Ցանկամ յիս միշտ ջիրյալ¹ սրտիվ կարոտիվ, կար [ոտիվ.]
Դանդի երբեք դադար չունիմ ի լալու, ի լալու,
Վուրպես թռչնիկ կարմիր վարթին կարոտիվ, կարոտիվ
Լամ և ողբամ կարոտիվ։
2. Դեմք-պատկերդ վուրպես լուսին լրացյալ, լրացյալ,
Մինչ տխտանիմ լինի սրտիվս ցնծացյալ, ցնծա[ցյալ]
Այսօր հինեն² եղևր անտիս ծացկիցյալ, ծացկիցյալ,
Անուր համար արտասվիմ յիս կարոտիվ, կարոտիվ
Լամ և ողբամ խուր սրտիվ։
3. Հյուս ծամիրույզ դանգուռ-գանգուռ վուրուրյալ,
Օվոք տեսնեք խելոք լինի մուլուրյալ, մուլ[ուրյալ],
Միթե միայն յիս իմ սիրովդ գլուրյալ, գլ[ուրյալ]
Եվ բազումք կան գլուրյալ կարոտիվ, կարոտիվ
Լամ և վուղբամ խուր սրտիվ։
4. Թռչուն կարոտակիս նման բլբուլի, բլբուլի,
Տիվ և գիշեր քույզ կարոտիվ իմ լալի, իմ լալի.
Յիրզեմ առ քիզ, իմ քաղցրեկ վարթ ցան[կալի], ցանկալի.
Զիս մի սպանիր անտիս քուլիս կարոտիվ, կարոտիվ
[Լամ և վուղբամ խուր սրտիվ]։
5. Է բաժական, քանի տանջիս այդ սիրուն, այդ սիրուն.
Մինչդեռ առնիս, լինի սրտիկդ իրարուն¹։

* 1. Մեղքոսի-Բեկի, Հայոց հին գրականության պատմությունը, վրացերեն, Թբ. 1941, էջ 208—213; Ավիլի ժանբաման² մեր «Շամչի Մեղքո» հատուկ աշխատության մեջ, որ պատրաստ է տպագրության։

¹ Զիրյալ—գիրագուծ։ ² Այսօր հինեն—այսօրվանից։

Շատ խուզմանն լցավ ի սիրտս իմ արյուն.
 Վուրպես սիրահարի սիրույդ կարոտիվ, կարոտիվ.
 Լամ և վուղբամ կարոտիվ, կարոտիվ:

II

1. Իմ սրբելու լույս պատկերին տիրության
 Ցանկամ յիս միշտ Չիբյալ սրտիվ, կարոտիվ.
 Քանզի երբեք դադար չունիմ ի լալու,
 Վուրպես թռչնակ կարմիր վարթին կարոտիվ:
2. Թուխ մազիրդ գանդուռ-գանդուռ վուլուրյալ.
 Շատ մարթ տեսա, խելոքներն մոլորյալ.
 Միթե միայն յիս իմ սիրովդ գլորյալ.
 Այլ և բազումք կան գլորյալ կարոտիվ:
3. Դեմք-պատկերիդ վուրպես լուսին լրացյալ,
 Տեսանելով լինի սիրտս ցնծացյալ,
 Այսօր էլս սրբեկնեմես հրոացյալ,
 Լնդուր համա արտասվիմ յիս կարոտիվ:
4. Թռչունք սիրահարին նման բլբուլի,
 Գիշիր-ցերեկ քույդ կարոտիվ իմ լալի,
 Հիզս խոսի, իմ կարմիր վարթ ցանկալի.
 Ինձ մի սպանիր անտիս քույն կարոտիվ:
5. Ըստեփաննուս քանի էրվիս այդ սիրույն,
 Վուր չիս տեսում լինի սիրույդ երերուն,
 Փիքը անելով լցավ սիրտդ քու արյուն.
 Վուրպես սիրահարի սիրույդ կարոտիվ:

III

1. Մարուր և սուրփ ըստինց քույին փափագիմ,
 Սեր իմ, փափագիմ, դարձուցանիմ, սիրով առնիմ, պաղատիմ,
 Սեր իմ, պաղատիմ, սիրահարյալ անտիս քույին սոչորիմ,
 Սեր իմ, սոչորիմ, լուսապայծառ դեմքիդ քույին կարոտ իմ,
 Սեր իմ, կարոտ իմ:
2. Խնչ արեմք, վուր մեր միդացն բարգացար, սեր իմ,
 Միք գրածն անողորմն հասկացար, սեր իմ, հասկացար, սեր իմ,
 Ինչքան սերա է, դու վուր էդքան բարձրացար, սեր իմ,
 Քաղցրաբարբառ ձայնիդ քույին կարոտ իմ, սեր իմ, խնդրում իմ:
3. Բավական է բարկանալդ, խնդրում իմ, սեր իմ, խնդրում իմ.
 Աչկս ճանփիդ մտիկ տալով պտուռ իմ, սեր իմ, պտուռ իմ,
 Այսքան լալով խելճ գլուխս զրկում իմ, սեր իմ, զրկում իմ,
 Մարքարտաշար շրթանց քույին կարոտ իմ, կարոտ իմ:
4. Միթե միայն յիս սուանց քու խամբանամ, սեր իմ, խամբանամ.
 Ի բնավից գորովությանց թալկանամ, սեր իմ, թալկանամ:

- Շատ սուբարլով* խիլը չէ հասնում դարմանամ, սեր իմ, դարմանամ.]
 Վուսկիափայլ հյուս ծամերույդ կարոտ իմ, սեր իմ, կարոտ իմ:
 5. Հափուր միում տեսնիլ կուլի հատկապես, սեր իմ, [հատկապես.]
 Կուրախանաս և կու խնդաս ծաղկապես, սեր իմ, ծաղ[կապես.]
 Ստեփանուսին մխթարիս արթնապես, սեր իմ, [արթնապես.]
 Պճնադարթյալ աչաց քուլին կարոտ իմ, սեր իմ, կարոտ իմ:

Բ. ՉԱՄԶԻՄՆԷՐՈ

I**

1. Մե տարի գնացի Պենակինց բաղն.
 Ինձ բեգամաղ արիր Վերու*** Գողերձի.
 Ինձ լհենց բեգամաղութենի համար
 Թաք փչացիլ էիր հուռ, Գողերձի:
2. Բարաքաթ չլի քու արած բանումն,
 Վերու մեջն կտրվի էդ քու անումն.
 Օղլուշաղդ ննդենի Դադստանումն.
 Բորլիկ վուտով ման դաս, դերու Գողերձի:
3. Դուռն խոմ ցանկացիլ իս թամահութենին,
 Համ սուլթանութենին, համ շահութենին.
 Տեսնիմ՝ դուռն հանդերիս հաց-թանդութենին
 Ծիրան պարում [ը] լիս, մերու Գողերձու:
4. Քու օրումն չոսատ դաս մե լավ բարու,
 Համաշա հանդերիս դուռն անրախտ չարու.
 Էշդ վիկալնիս դուռն, էհաս սարու,
 Բարով էլ վուչ հիդ դաս, մերու Գողերձի:
5. Դուռն իմ սիրան դուգուն արիր, դաղ արիր.
 Ծիծաղեցար, ուրախացար, խաղ արիր.
 Քու Շամչի-Մեխմուդ բեգամաղ արիր.
 Հալբաթ էկիլ էր քո սերու Գողերձի:
 Թեջլիսի ա
 (Թեջլիս է)

II***

1. Ուզում իմ թարբիդ¹ անիմ, Տալալբեցի շուն Առաքիլ.
 Մեղափուլ² կու բարգանաս, ունիս էա փիս գուն³, Առաքիլ.
 Բիդիքիդ գովգովում իս, յարար ուլ իս գուն, Առաքիլ.
 Խոսիաթդ աղվեսի է, գուն իս խո մեյմուն, Առաքիլ.
 Թե մեկ էլ դեսն գուքաս, գլխիդ կոծիմ ձուն, Առաքիլ:

* Բնագրում—սուկալով:

** Հմտ. Դարբեղյաբի երգը՝ Հայ աշուղներ, II, 251—252:

*** Վերա—Թրիլիսի թաղամասն է:

*** Հմտ. Հայ աշուղներ, II, 263—266:

1 Թարբի—գով, գովառան: 2 Մեղափուլ—համկարծ (?), միտմ (?): 3 Գուն—բնավարու-

2. Մինչև ումինձ պատուովում իս, հենց գլխիս թե շահագրա¹ իս, Ամա էլ արամ² դիդե, ինքդ մե անմիդ գաղա իս, Աշքարա հոքեուր իս, տակետակ հարամգաղա իս, Փուրդ օցերով լիքն է, քի օվ կոսե թե սաղա իս. Յարաք քիդ ինչ չադա կա, վայ էդ քո հոքուն, Առաքիլ:
3. Ութի պես արծաթասեր արժան ըլիս ութի դասին, Դժուխի փայ դառնաս, մաիկ տաս կարե կարասին. էնդի քինի չիս ճարի, հասրաթ կուլիս լիքն թասին. Թե ասիք, համով դուզիմ քու պարտեցած ին[ն] աբասին. էկար ու կուլով ուղեցիր էրկու մինալթուն³, Առաքիլ:
4. Մեկ քու սուտ լավութիւնն հաղար թուման գին իս անում. Ծուռն ճանիի ման գալու աշկերումդ չին⁴ իս անում. Թափթափում⁵ շենանում իս, հալաթ գողութին իս անում. Պետկ է դուն մերին գնաս, շալիով կոխ հուն, Առաքիլ:
5. Ինչրի հիմի խիստ դոստ ինք, հիմի կտրեցիր էն սերն, Յիգոր. Մարնեուր կերթաս, քիդ կու տանն տանուտերն. Վրեա յասալու⁶ գրիր, էն քու քինթ-կտրած ախուրն. Հաղար գուզե վուր բարդանա, չի կանա կտրի իմ խերն. Իմացի, վուր յիս կուլիմ, ցրտին կծե լուն, Առաքիլ:
6. Տիս⁷ էս քու թարփւլամեն⁸ ինչպես լաղաթով շարիլ իմ. Քիդ պես մարթկերանց պարթկն լալ ամանով վճառիլ իմ. Իրան շուրեբով թաղիլ իմ, վրեն դութանն վարիլ իմ. Մառնեուրու ջաղացն քու դովլաթեմեն ճարիլ իմ. Լավութինդ չիմացա, անիս թողություն, Առաքիլ:
7. Համ չտիս, համ նովթիսա⁹, բեգասլ ունիս էդ քու սոյին¹⁰. Ամեն օր օյադ¹¹ կացի, մեկ օր յիս քիդ գուքամ օյին. Քիդքիդ բաղրանում իս, օյով չէ հավում քու բոյին. Ն[ը]հախ բեղամաղ արիր բեչար Շամչի-Մելքոյին. Պետկ է վուր հաշն շինիս, տանիս դիրա տուն, Առաքիլ:

Դ. ԶԱՀԵԼ-ՕՂԼՍՆ

1. Թե սուչ¹¹ ունիմ, իմ դիվանս¹² անիս դու. Շատ բազի¹³ իմ՝ քու ձիրով սպանիս դու. Հեյ, նովջվան¹⁴, շատ աննման իմ դու. Հել-միխակ-դարչին-ուհան իս դու. Անթառամ* ծաղիկ չայիր-չիման¹⁵ իս դու. Չարխուհն դուս էկած օսկե փնջան իս դու. Զավանիր անգին քար-բաղնշխան իս դու. Նուր մաներ¹⁶ իս կամ ինչպես իսան իս դու. Գողալներու միշումն մե նուր ջվան¹⁷ իս դու.

* Բնագրում—անթառան:

¹ Շահագրա—սանի աղի, արաբարդի: ² Ալամ—աղաք: ³ Մինալթուն—սակե դրամ (պարսկական): ⁴ Չին—սկսում: ⁵ Թափթափում—տրաք: ⁶ Յասալու—саян: ⁷ Թարփւլամ—գավթգալթախ: ⁸ Նովթիսա—նոր հարստացած: ⁹ Սոյ—ցեղ: ¹⁰ Օյադ—պարսպ: ¹¹ Սուչ—մեղ, հանգամ: ¹² Դիվան—գաղափար: ¹³ Բազի—զարգացած: ¹⁴ Նովջվան—նորման: ¹⁵ Զայիր-չիման—բար, դավար: ¹⁶ Մաներ—манира: ¹⁷ Զիվան—պատանի, երիտասարդ:

Ինձպես մի սալումի¹ դինու² իման³ իս դու:
Աշխարիս համար դամ-ու-դովրան⁴ իս դու:

Հեյ, դամ-ու-դովրան իս դու.

Շուխիզ կապած վրան իս դու.

Շափաղաթի⁵ վրան իս դու.

Սազ դուքա, ինչ անիս դու.

Ջարթարած սիլան իս դու.

Ջուրա⁶ փալեվան իս դու.

Թաք էս բանդից հանիս դու.

Մազամ⁷ հոքենան իս դու:

Ինձ վուր թողնիս, Թաք չփռշմանիս դու:

2. Դուն Շիրին իս, դարիւր Փահրադի պես.

Ինձ մի էրի էշխով Բարամ դադի⁸ պես.

Դուն ջահել իս, յիս՝ օվչի⁹ սալադի¹⁰ պես.

Պաակիրքդ աննման է բաղդադի¹¹ պես.

Մի թող տարեկուսած բեմուրադի¹² պես

Մե փիքը արս քիդի ուստադադի¹³ պես

Գիշիր-ցերեկ մողթ պահն գադի պես.

Քիզ յիս աղաչում իմ Գրիստե բադի¹⁴ պես.

Ինչի համա դեմ իս ննդնում յադի պես.

Մատնիրդ մում, կոնիրդ շիմշադի¹⁵ պես:

Կոնիրդ շիմշադի պես.

Մազտ դարսած շադի¹⁶ պես.

Քոսկըզ դրուստ դադի պես.

Սարքած իս սհաթի պես.

Ջամալա¹⁷ է սուրաթի պես.

Իրզրի փարվանի¹⁸ պես.

Դոշտ մաքաղաթի պես.

Քալդ սիվ է սաթի¹⁹ պես:

Բուլոր լուսին տասնունինդ օրվան իս դու:

3. Քու ջհաթեն²⁰ տիս ինչպես սիվացիլ իմ.

Քիզ գովելու անջաղ լիզուս բացիլ իմ.

Անջաղ լիզուս բացիլ իմ.

Ջունուն²¹ իմ, չորացիլ իմ.

Տարեկուսած կացիլ իմ.

Սիստ մոլորած մնացիլ իմ.

¹ Սալում—մուսլամ, մահմեդական: ² Դի—կրոն: ³ Իման կամ իմամ—առաջնորդ, ղեկավար: ⁴ Դովրան, դամ-ու-դովրան—վայելչություն, խաթիվամբ: ⁵ Շափաղաթ—ճարիք: ⁶ Ջուրա—մեծ, ուժգուն: ⁷ Մազամ—վրաց. մազարամ, աղիւյն: ⁸ Դադի—վարպետ, ուստա: ⁹ Օվչի կամ ափշի—որսորդ: ¹⁰ Սալադ—վարդեն: ¹¹ Բաղդադի—մետաքսե թաշկինակ: ¹² Բեմուրադ—անխիղճ անդուծ: ¹³ Ուստադադ—վարպետի կամ ուսուցչի օրդի: ¹⁴ Գրիստե բադի—Христа ради, մութացկան: ¹⁵ Շիմշադ—սառիկ մշտադալար: ¹⁶ Շադ կամ շադա—շարուն: ¹⁷ Ջամալ—դեմք, կերպարան: ¹⁸ Իրզրի փարվան—երկրի քիթ: ¹⁹ Սաթ—ֆանդիքար: ²⁰ Ջհաթ կամ ջահաթ—առթիվ պատհանով: ²¹ Ջունուն—խեղագար, ցնդված:

Հին զարդերս բացիլ իմ.
Քեզմեն էրված մնացիլ իմ:
Պատիկ Ջանիլ-Օղլունն մեռանմա՝ անխա դու:

II

1. Մե թնդություն ունիս բարութ թվանդի.
Անտակ ծով իս, գեծուն² տալիս իս լանդի³.
Զարմանալի ուստութիւնդ է փռանդի⁴.
Բարաթ-բարաթ⁵, նշխում իս փարշելանդի.
Առափառուց բաց կուլիս ունդեռանդի.
Քաղցր ճկճկում իս, ձենտ է զանդի.
Օրս-ունմըս էրնեկ քիզ մոզ ժառանգի.
Բու տեսնողն նուր հիզ է գալի կյանքի:
Շատ ուժուգ⁶ ունիմ կյանքի.
Օլոր քիզի կու ճանդի,
Կու տաս նրան խաթանդի⁷.
Թաստ կու բերիմ փռանդդի⁸.
Զուրա ունիմ լուռանդի⁹.
Մաշուր կոնիմ շեշտանդի¹⁰.

Թաք մեկ էլ մոզս սոյբաթ անխա դու:

2. Դիշեր-ցերեկ աչկես արյուն լացիլ իմ.
Տարեստարի քու դրանն կացիլ իմ.
Զիս հարցնում, թե ինչպես դիմացիլ իմ.
Արնիցս ցամաքիլ իմ, չորացիլ իմ:

III

1. Պարուն Ստեփան, յաղուդ¹¹ բեղամաղ իս դու.
Աստված օղորմած է, փիթր¹² չանիս դու.
Էլ քու թաթուշի¹³ մեշն խան իս դու.
Մե մարթու չէ, ալամին¹⁴ ալան¹⁵ իս դու.
Հատուկ էլ վուր միմ ասկու ինդան¹⁶ իս դու.
Զուն վուր ամեն մարթու մեջ ալան իս դու.
Էս թարիփիցն¹⁷ ալիլ գովական իս դու:
Հատուկ մե սուլթան իս դու.
Ափաթու¹⁸ դովրան¹⁹ իս դու.
Լալ ցոդ²⁰ ու մաքան²¹ իս դու:
Մեջլիսումն մե օսկե փինջան իս դու:
2. Պարուն Ստեփան, յաղուդ բեղամաղ իս դու.
Դուշմաներուդ բանն դիփ հրավադ²² ա.
Իրանց մեշն սարի միմ դ'աստվադ²³ ա.
Իբր թե քու ջահանն²⁴ կոսին նավադ²⁵ ա.
Զարթիր, գլուխն տեսնողն ասե դավադ²⁶ ա.

¹ Թանա—գուր, դեղ ու դարման, ² Գեմ—վրաց. գեմի, նալ³ Լանդի—գանգալ, ⁴ Փռանդի—
թարաշի⁵ Բարաթ-բարաթ—պետպետ, տեսիլ տեսիլ⁶ Ուժուգ—վրաց. խեղդ, եռյա: ⁷ Խաթան-
դի—փորձանիլ [?] ⁸ Փռանդի—օտար⁹ ¹⁰ Շեշտանդի կամ յաղուդ—մեմակ¹¹ Փիթր—վրաց. փիթրի,
մեմամուր: ¹² Թաթուշ—¹³ Ալամ—աշխարհ¹⁴ Ալան—հայրենի¹⁵ Ինդան կամ ինդա—բեմալի:
¹⁶ Թարիփ—գավ, գավառանի:¹⁷ Ափաթ—¹⁸ Դովրան—վաշիշուրյան, խրախման:¹⁹ Շոդ—լոմմուլ:
²⁰ Մաքան կամ մաքյան—բնակարան (Ճամա. վրաց. մաքանա): ²¹ Հրավադ—²² Դաստվադ կամ
դաստվադ—մեմամուր:²³ Զահան—գլուխ, ձգսում:²⁴ Նավադ—նավաթ:²⁵ Դավադ, դավա—ուրջ:

Օվ լսե, քիզ համար միժ հանրավաղ¹ ա:

Սոյիդ² սուլ թավադ³ դա

Բոյիդ մինա սավադ⁴ դա.

Օվոր տեսնե հավա,

Վուր իմանա՝ իշխող ու իշխան իս դու:

3. Ջադա՝ տուր գուշմանիդ, վուր դա իմանի.

Ջաբթիբ մեչկն նշան ինչպես քամանի⁵:

Գ. ԱՆՍԱՆՈՒՆ ԵՐԿԻՉ

1

1. Ով, սիրելի, մեթի յիս ձիր միխկն իսկի չիմ գալի.
Լեյլիս կորած Մեջլումն իմ, դարբեդար՝ ման իմ գալի.
Մեկտում իմ սիւլ սրտով կամ էսպես կսկծալի.
Չիմ գթնում իմ սիրածս, թեպետ շատ ախ իմ տալի.
Ինչ հիռացար ինձանից, արշան աչոք իմ լալի.
Ով, սիրելի, մեթի յիս ձիր միխկն իսկի չիմ գալի.
Լեյլիս կորած Մեջլումն իմ, դարբեդար ման իմ գալի:
2. Բու էշխմանն յիս դաւիլ իմ գծված, ինչպես սարսաբի⁶.
Դրախտն դուս էկած իս ինչպես ծաղիկ բահարի⁷.
Միչկիդ շաքն սազ գուքա, մատիթ ջավահիր քարի.
Տեր աստվածն քիզ պահե հարուր ու քսան տարի.
Թուզ յիս տինամ քու ցափն, աշպակս թնդթնդալի⁸.
Ով, սիրելի, մեթի յիս [ձիր միխկն իսկի չիմ գալի.
Լեյլիս կորած Մեջլումն իմ, դարբեդար ման իմ գալի:]
3. Համ մեհակ, համ հիռու սերն անշափ դալում է.
Էրում է մումի նման, օրս ու ումբըս⁹ հալում է.
Առանց քիզ չիմ դիմանում, սիրտս էնքան լալում է.
Էլ ինչ ասիմ իմ դարդն, արաշքարս մալում է.
Յիսի կուլի մեկ էլ տեսնիմ էրեսդ ծիծաղալի.
Ով, սիրելի, մեթի յիս [ձիր միխկն իսկի չիմ գալի,
Լեյլիս կորած Մեջլումն իմ, դարբեդար ման իմ գալի:]
4. Կամիմ հնալ աշխարհես, իմ սիրեկան, արի՛ տիս.
Սեյլանու դուս էկած իս, մե անգին մարքարիտ իս.
Չարեմն հիռու կացիր, բարի գուրծեն բարի տիս.
Աստված քիզ բախտավորի, տարվան գլխին արի՛ տիս.
Դադար աչկիդ բարովիմ, սրտիմ թնդթնդալի.
Ով, սիրելի, մեթի յիս ձիր միխկն իսկի չիմ գալի.
Լեյլի կորած [Մեջլումն իմ, դարբեդար ման իմ գալի:]
5. Համ բարիվուր բարիվուր լումն թեկին ծնյալ իս.
Յայնում իմ քիզ, սիրեկան, միշտ մտւումս գրած իս.
Յարար քիզ ինչպես տեսնիմ, իրզնքումս գրած իս.
Չէ կարելի ձիրն տալ, ասածանից մհրած¹¹ իս.

* Բնագրում՝ թնդթնդալի:

1 Հանրավաղ: 2 Սոյ—ցիդ: 3 Թավադ—վրաց. թավադի. իւսում: 4 Սավադ—? 5 Ջադա—պա-
տիմ: 6 Բաման—աղբնում: 7 Դարբեդար կամ դարբեդար—քաղաքական, դաճեղուն:
8 Պարսարի—ցեղած: 9 Բահար—սե. սղայիդ: 10 Ումբը—կյանք: 11 Մհրած—կեճված (մահրած—կեճի):

Գնա, Ստեփան, ուրախ կաղ, աղեղ ումուղ¹ է տալի.
Ով, սիրելի, միթե յիս ձիր միակն խակի չիմ գալի.
Լեյլի կորած Մեջլումն իմ, դարբեղար ման իմ գալի:

11

1. Իմ սիրելի, մոգս արի, հալղ իմանամ.
Թե դու խոսկիս անգաճ հանիս, քիզ վռնեց դիմանամ.
Քու վազ օրն յիս չտխնիմ, անքճով չիմանամ.
Աչկա ամեն օր համփիտ է, գրովդ իմանամ:
2. Լուսնյակ էրեսդ պայծառ խալերուտ.
Խթխթ² աչկիրդ կու գովիմ ունքիդ սալերուտ.
Բոյդ դարամ է քաշած հաքած ալերուտ.
Մատնիրդ շիմշիտ ունիս, ձիրիտ բաներուտ:
3. Քու տեսնողի խիլքն կենա արած բաներուտ.
Ամառնային, դարնան հովին վարին չաներուտ.
Քու մտիկ տալով հալլեցա, միռնիմ ջաներուտ.
Իմ սիրելան, մտիկ արն արած ուհմերուտ³:
4. Առաջ յիս քու մորն գովիմ, խժոււմ քիզ, իմ յմր.
Ելրուլի պես ճկճկում իս, վարթին օրեր խար.
Դոշիտ մեջն սաղ է գալի մարքարիտե շար.
Մտիկ տալով խիլքս տարար, ինձի արն հար:
Յիս քու թարիփեն⁴ չիմ բեղրի, քանի քի ունիմ սաղ.
Մեմե խոսկով ինձ էրոււմ իս, սիրտս անոււմ իս դաղ.
Թե կամենաս, ի միասին արի գնանք բաղ.
Էս քու Ալամդարովի քեփն անիս չաղ:

Проф. А. Меликсет-Бек

Новооткрытый армянский рукописный сборник в грузинской транскрипции и неизвестные ашугские песни XVII—XIX в.в.

(Р е з ю м е)

Армянские рукописи в грузинской транскрипции, так же как и азербайджанские и тюркские или турецкие рукописи и печатные книги в армянской транскрипции, в достаточном количестве представлены в наших музейных собраниях и библиотеках. Они свидетельствуют не только о добрососедских и дружественных отношениях между двумя соседними братскими народами, в одном случае—армян и грузин, а в другом—тех же армян и азербайджанцев или армян и тюрок (турок), но и о той культурной ситуации, которой следовал во-

¹ Ումուղ—վրաց. խմելի, հուլո: ² Խթխթ—վրաց. խոխոթի—փառայան: ³ Ուհմ—գուր, գրաբարձրյան: ⁴ Թարիփ—գովի, գովասանի:

влеченный в определенную общественно-политическую орбиту тот или иной этнический коллектив, например армяне в Грузии после падения армянских царств—анийского в XI в. и киликийского в XIV в.

Одною из таких рукописей, именно в грузинской транскрипции, притом весьма оригинальною по составу и содержанию своему, является сборник из частной коллекции проживающего в Тбилиси жителя гор. Гори Якова Константиновича Хизанова, каковой сборник любезно был приелан автору настоящей статьи католикосом-патриархом всея Грузии Калистратом.

Рукопись in folio на синей бумаге в 332 листа, в переплете, переписана в первой половине XIX в. Степаном Давидовичем Аламдаровым, повидимому горийцем, который упоминается в мемориальных записях (приписках), следуемых после каждой главы основного текста, включенного во второй раздел сборника, носящего характер краткого Синаксаря.

Сборник состоит из 6 разделов: в первом представлен 31 рассказ на темы ветхого и нового завета (по библии); во втором—агно-графо-мартирологические и гомилетические тексты, числом до 33; причем жития и мученичества заимствованы из Синаксаря в редакции тер-Израеля первой половины XIII в.; в третьем налицо молитвы: 4—Ефрема, 1—Афанасия и Ефрема, 2—Григория Просветителя, 2—Григория Нарекского и 1—неизвестного автора, всего до 10; в четвертом сгруппированы песнопения (шараканы) на усопших и на отроков, всего до 58; в пятом собраны, с одной стороны, оды и восхваления, посвященные духу святому, спасителю, богородице, Иерусалиму, преображению, и с другой—песни о весне, веселье, любви, дружбе и пр., всего до 47; наконец, в шестом помещены неизвестные в печати стихи и ашугские песни на разных языках: 4—на грузинском, 4—на азербайджанском и тюркском и 10—на армянском, всего до 18, причем из армянских стихов и песен 3 принадлежат Джаһел-Оглану, 3—Степаносу, 2—Шамчи-Мелко и 2—неизвестному автору. Армянские стихи и песни нами публикуются здесь полностью, грузинские же приложены к нашей же статье в т. XXVI „Трудов Тб. Гос. Университета“ (1944).

Рукописный сборник особенно ценен тем, что весь материал в нем, за исключением публикуемых нами армянских песен, а также стихов на грузинском и азербайджанском или тюркском языках, изложен на древнелитературном армянском языке (грабаре), вульгаризированном под влиянием тбилисского армянского диалекта. Публикуемые же нами песни сочинены или на древнелитературном армянском (грабаре), вульгаризированном формами тбилисского армянского диалекта (Степанос), или же на тбилисском армянском диалекте с примесью грабарных форм (остальные).

Состав и содержание рукописного сборника не оставляет сомнения в том, что он специально приспособлен к запросам армян гор. Тбилиси и вообще Грузии. Значение его для изучения тбилис-

ского армянского диалекта чрезвычайно велико, как памятника промежуточного этапа между творчеством Саят-Новы (XVIII в.) и Г. Сундукянца (второй половины XIX и начала XX в.), частично же и для предшествующей Саят-Нове эпохи.



A $\frac{II}{30359}$

[104]

памятника про-
(XVIII в.) и
частично же